Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16224

1931

2002

2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С. С Р

206

ԸՆԿԵՐՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ, ՇՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ, ՔԱՂԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ

Պրոլետարական դիկտատուրայի ջոկատներից մեկը—Կովկասյան Կարմրադրոշ բանակը զորախաղի ելավ։ Սոցիալիզմ կառուցող յերկրի՝ ԽՍՀՄ հարավային դռների մոտ կանգնած բանակը դուրս յեկավ ընդհանուր ստուգման յենթարկելու անցյալ ուսումնական տարում ձեռք բերած իր մարտունակության աճը։

Ի՞նչ պայմաններում ե ընթանում այդ ստուգատեսը։

Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտում ամբողջ աշխարհի մեկ վեցերորդ մասում—ԽՍՀՄ, դաժան տնտեսական ճգնաժամ և պայքարի խիստ սրում կապիտալիստական աշխարհում, փթող կապիտալիզմի սիստեմի և հաղթանակող սոցիալիզմի սիստեմի միջև գոյություն ունեցող հակասությունների խիստ խորացում—ահա ժամանակակից պատմության ամենափայլուն դեպքերը, վորոնք իրենց վրա յեն գրավում բոլորի ուշադրությունը։

Նայեցեք աշխարհի քարտեզի վրա. նա վորոշակի ու խիստ կերպով բաժանված ե յերկու հակադիր բևեռների։

Սոցիալիստական շերտում—պրոլետարական հեղափոխության ավանգարդ լենինյան Համկոմկուսի(բ) և նրա ղեկավար ընկ. Ստալինի ղեկավարությամբ աճող կերպով իրականացվում ե սոցիալ—տնտեսական փոխհարաբերությունների համաշխարհային—պատմական վերակառուցումը։ Ցերկիրը յեռում ե

355.5
Ч-94

355 5
Ա-94

ղարված շինարարության մեջ, սոցիալիզմ ստեղծող միլիոնների ստեղծագործական աշխատանքում: Համաշխարհային պրոլետարական հեղափոխության ոմաշխարհային պրոլետարական հեղափոխության ոմաշխարհային պրոլետարական հեղափոխության ոմ

ռազմա—քաղաքական միությունների կնքում, սպառազինման կատաղի աճ—ահա ԽՍՀՄ դեմ նոր իմպերիալիստական ինտերվենցիա կազմակերպելու իդեոլոգիական և նյութական նախապատրաստման պարզ ազդանշանները:

Պատմական «խաղաղ» դադարի ժամկետը հասնում է իր վախճանին: Աշխարհի վրա բարձրանում են նոր իմպերիալիստական ինտերվենցիայի արյունոտ չղջերը:

Լսի՛ր, կարմրադրոշային, ԼԻՆԵԼ ՊԱՏՐԱՍՏ:

Իրը պատասխան նոր իմպերիալիստական ինտերվենցիայի նախապատրաստման, թող կորովի կերպով հնչի կարմիր բանակային ռազմական ձայնը

—Պատերազմ մենք չենք ուզում, բայց սոցիալիզմի համար կռվել մենք պատրաստ ենք:

—Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց և մեր հողից վոչ մի վերշոկ ուրիշին չենք տա (Ստալին):

Իմպերիալիստների ԽՍՀՄ վրա հակահեղափոխական հարձակում գործելու տենդոտ նախապատրաստությանը մենք հակադրենք՝

Մեր յերկաթե միաձուլությունը Լենինի կուսակցության և նրա գլխավոր գծի շուրջը:

— Սոցիալիզմ ստեղծող դասակարգի անխորտակելի ույժը.

— Ռազմական բարձր ուսումը և գալիք դասակարգային կռիվների համար պատրաստվածությունը:

— Բանակային զորախաղերը — մեր մարտունակության ընդհանուր ստուգատեսը «գերազանց» կերպով անցկացնելը:

Մեծ է մեր ույժը և ամուր մեր կորովը: Թող յուրքանչյուր ռազմիկ հաստատի իր կորովը իր՝ կարմիր բանակային պարտականությունների փայլուն կատարումով, հեղափոխական յերկաթե դիսցիպլինային յենթարկվածությամբ, կայունությամբ, հնարագիտությամբ, զորախաղային պայմաններում ցուցադրած նախաձեռնությամբ:

ՀՍՍՀ ԳԱ Գրադարան
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. Մ. Մասիսյան
36066-66

Կովկասյան Կարմրադրոշ բանակը զորախաղի վերջում պատրաստ է տալու ԽՍՀՄ Ռազմահեղափոխական Խորհրդին:

Ընթացիկ ուսումնական տարվա վերաբերյալ հրամանն իրականացված է լրիվ կերպով:

Անդրկովկասյան Ֆեդերացիայի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատին – Բաքվի պրոլետարիատին Կովկասյան Կարմրադրոշ բանակը պետք է հայանի՝

— Բանակային զորախաղերում հեղափոխական դիսցիպլինայի և վոչ մի խախտում տեղի չի ունեցել: Իր պարտավորությունները՝ սոցմրցման պայմանագրի համաձայն՝ Կարմրադրոշը կատարել է:

Բաքվի Անդրկովկասի սահմաններում Կովկասյան Կարմրադրոշ բանակը հանդիսանում է հեղափոխական սրատես պահակը: Իր գոյության բոլոր տարիներում Անդրկովկասի աշխատավորության հետ նա կապված է յեղել ինտերնացիոնալ բարեկամության, համերաշխության և միաձուլության ամենամուր կապերով: Վերջերս անցկացրած Վորոշիլովյան շաբաթվորյակները Անդրկովկասյան վոլխոզային դաշտերում – ամենալավ վկաներն են Անդրկովկասյան Ֆեդերացիայի սոցիալիստական շինարարության մեջ մեր ունեցած մասնակցության, բանակի և սոցիալիզմ կառուցող Անդրկովկասյան ժողովրդների անխախտելի միության վկաներն են:

Լսի՛ր, Կարմրադրոշային. ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատավորության հանդեպ զորախաղերում մի անգամ ել ցուցադրենք Անդրկովկասի աշխատավորության հետ ունեցած մեր ինտերնացիոնալ միաձուլության անքակտելի կորովը:

Թող յուրաքանչյուր ռազմիկ զինվի անդրկովկասյան հողամասում Լենինյան ազգային քաղաքականության կիրառման հերթական խնդիրների գիտությամբ:

Յուրաքանչյուր ռազմիկ Լենինյան ինտերնացիոնալիզմի դրոշակակիրն է: Ինտերնացիոնալ միության և վոչ մի խախտում: Մեծապետական շովինիզմի և

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

տեղական նացիոնալիզմի փաստի և վոչ մի արտաբերում։ Ամրապնդել Կարմրադրոշային ինտերնացիոնալ միաձուլությունն Անդրկովկասի ժողովուրդների հետ — ահա այն լոզունգները, վորոնց պիտի պատվով իրացնի ինտերնացիոնալ բանակի ամեն մի մարտիկ։

Թող յուրաքանչյուր մարտիկ լինի կուսակցության գլխավոր գծի պրոպագանդիստ-տարածողը զորախաղի ռայոնի աշխատավոր աղգաբնակչության մեջ, վրացական գյուղի սոցիալիստական վերակառուցման տեմպերի ուժեղացման համար ագիտացիա տանողը, նրա պրակտիկ ոգնականը՝ կոլխոզային արդյունաբերության կազմակերպման մեջ։

Ռազմիկ — կոլխոզնիկնե՛ր։ Ձեր կոլխոզային աշխատանքի փորձը հաղորդեցինք զորախաղի ռայոնի կոլխոզներին։

Բացատրեցինք կոլխոզնիկներին և անհատականներին ԽՍՀՄ դեմ իմպերիալիստական ինտերվենցիայի աճող սպառնալիքի մասին, վոր պետք է ամրապնել յերկրի պաշտպանունակությունն ու կարմիր բանակի մարտունակությունը, հենց տեղում ոգնեցեք սրանց կազմակերպել ռազմականացման և դեպի կարմիր բանակը հերթական զինակոչն անցկացնելու աշխատանքը։

Դասակարգային թշնամիները — սոցիալիզմի թշնամի կուլակությունը, Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունների խղճուկ տականքները — մենշևիկները, դաշնակները և մուսավաթիստները, անկասկած, կփորձեն հակահեղափոխական ագիտացիա տանել զորախաղերի ռայոնների աղգաբնակչության մեջ։

Վարկաբեկել Կարմիր բանակն աղգաբնակչության աչքում, աղգային ատելություն սերմանել մեր ինտերնացիոնալ միաձուլությունը խախտելու համար, հակահեղափոխական պրովոկացիա մղել — ահա դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի նպատակները։

Դասակարգային ոգնություն և քաղաքական կայունություն, թշնամու և նրա ագիտացիայի հակահեղափոխական ելույթյան մերկացում, ռազմական դաղտնիքների խիստ պահպանում — ահա կարմիր բանակային պատասխանը թշնամու յելույթներին։

Հնգամյակի յերրորդ վճռական տարին Կովկասյան Կարմրադրոշ բանակն անց է կացնում Բաքվի պրոլետարիատի հետ մրցելու, Անդրկովկասի աշխատավորության ամենաբարձր պարգևի՝ Անդրկենտգործկոմի և յեղբայրական հանապետությունների դրոշների համար պայքարելու նշանաբանի տակ։

Թող զորախաղերում ամեն մի ռազմիկ այդ գործը դարձնի պատվի գործ, անվեհերության ու հերոսության գործ։

Սմառային ուսման յեղափակիչ ետապն անց կացնենք սոցմրցման և հարվածայնության ծավալուն դրոշի տակ։

Դեպի Կարմրադրոշակային զորախաղեր։

Դրությունը — կապիտալիստական հորիզոնում բարձրանում են նոր իմպերիալիստական ինտերվենցիայի արյունոտ ջղերը՝ ընդդեմ համաշխարային պրոլետարիատի հայրենիք՝ ԽՍՀՄ։

Ուպատակը—ամրապնդել կարմիր բանակի՝ իբր պրոլետարական դիկտատուրայի զինված հենակետի մարտական կորովը, վորն ընդունակ է ջախջախիչ հարված հասցնելու նրանց, վորոնք կփորձեն հարձակվել համաշխարհային հեղափոխության հենակետ՝ ԽՍՀՄ վրա։

Մոտավոր խնդիրը — Անցկացնել զորախաղեր — ընդհանուր ատուդման յենթարկել հնգամյակի յերրորդ վճռական տարում ձեռք բերած մեր մարտունակության աճը — «գերազանց» գնահատական ստանալու համար։

Լենինիզմի ուղեցույց աստղի հետ — դեպի առաջ։

Կեցցե՛ պրոլետարական հեղափոխության կոլլեկտիվ ղեկավարը — Համամիութենական կոմունիստական կուսակցությունը։

24.Հոդ 1 10 CA

Կեցցե՛ Անդրկովկասյան Ֆեդերացիան — Լենինյան ազգային քաղաքականության ճիշտ լուծման փայլուն օրինակը:

Կեցցե՛ համաշխարհային պրոլետարական հեղափոխության հաղթանակը, որի շողերն ավելի ու ավելի պայծառ են փայլփլում պատմության հորիզոնի վրա:

Վրաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմ
ԱԿԲ Ռազմահեղափոխական խորհուրդ
1931 թ. ոգոստոսի

34.
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

სახელმწიფო გამომცემლობა

„Ջարյա Վոստոկ"-ի տպ. Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. Ռուսթ. պող. 36

Գաղվեր 2101. Գլավլիտ 1548. Քանակ 1000.

ZUUR-Арм. ССР Ц. им. А. Мясникяна Սեմյոնիկյանի անվան

2013

ՀՀ Ազգային գրադարան NL0050014